

ԱՆՑԵԱԼՔ

ՆԻԿ. ՄԱՐ

Դեկտ. 20-ի գիշերը, Լենինգրադում (Պետերբուրգ), երկարաժեք ու ծանր հիւանդութիւնից յետոյ, վախճանեց մեր ժամանակ-ների ամենախոշոր գիտնականներից մէկը՝ Ակադ. Նիկ. Մարը: Հանդուցեալի գերը առանձնապէս մեծ է Կոլկասի եւ Հայաստանի մշակոյթի ուսումնասիրութեան եւ գնահատութեան գործում: «Վէմ»-ի յաջորդ համարում մենք կը տանք առանձին ուսումնասիրութիւն նրա կեանքի եւ գործի մասին:

ԲԱՀԱԹՈՒՐ ԲԱՀԱԹՐԵԱՆ

Դեկտ. 1-ին Երեւանում մեռել է հայ գիտութեան նվիրւած լաւագոյն մտաւորականներից մէկը՝ Բահաթուր Բահաթրեան: Հանդուցեալը ծնւել էր 1872 թ. Ղարաբաղում, ուսել Շուշու ռէալական դպրոցում եւ Գէորգեան Ճեմարանում: Բարձրագոյն կրթութիւնը ստացել էր Ժընեվի համալսարանի բնագիտական եւ մաթեմատիկական ճիւղում: Ապա՝ աւարտել էր Գանդի ճարտարագիտական դրագուցը եւ իրեւ ճարտարագէտ - քիմիկոս մաել մասնաւոր կեանքի ասպարէզ: Զգալով, սակայն, որ իր կոչումը գիտութիւնն է ու դպրոցը՝ անցել էր մանկավարժական գործունէութեան՝ նվիրւելով մաթեմատիկայի գասաւանդութեան հայկական դպրոցներում:

1914-17 թ. երեք ուսումնական տարի, Բահաթրեանը մաթեմատիկայի գասաւու էր Գէորգեան Ճեմարանում, յետոյ՝ ուսուցիչ Երեւանի դպրոցներում եւ ի վերջոյ, գասախօս Համալսարանում եւ Պոլիտեխնիկ ինստիտուտում: Միեւնոյն ժամանակ զբաղւում էր եւ հասարակական գործունէութեամբ. 1918 թ. Հայաստանի ներքին գործոց նախարարի պարենաւորման ներկայացուցիչ էր Վաղարշապատի շրջանում. 1921 թ., փետրւարեան ապստամբութեան օրերին, Կոմինդանտ Կոտայքի գիւղերից մէկում: Անդամ էր Հ. Յ. Դաշնակցութեան եւ նրա համոզւած գործիչներից մէկը:

Բահաթրեանի աշխատանքի մնայուն մասը, սակայն, նրա գիտական լուրջ ուսումնասիրութիւնն է Անանիա Շիրակեցիի մասին: Այդ գործի վրա Բահաթրեանը աշխատեց երկար տարիներ եւ մեծ ջանասիրութիւն եւ հմտութիւն ցոյց տւեց: